ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

25.01. .2016թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը /այսուհետ՝ Սուբսիդիա հատկացնող/՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Կարապետյանի, մի կողմից, և «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ Սուբսիդիա ստացող՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող տնօրեն Ա. Շիրինյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սուբսիդիա հատկացնողը հանձնարարում է Սուբսիդիա ստացողին, իսկ վերջինս պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել իր կանոնադրական գործառույթներով նախատեսված գրադարանային ծառայությունների մատուցում (միջոցառումներն ու ծրագրերը) համաձայն՝ հաստատված 2016 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվի:

Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման դիմաց վճարումը կատարվում է սուբսիդիայի հատկացման ձևով՝ «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 08 բաժնի 02 խմբի 01 դասի «01. Գրադարանային ծառայություններ» ծրագրով նախատեսված բյուջետային հատկացումների և համամասնությունների սահմաններում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սուբսիդիա հատկացնողը պարտավոր է՝

2.1 Սույն պայմանագրի պահանջներին համապատասխան՝ Սուբսիդիա ստացողից ընդունել պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները և փոխհատուցել դրանց համար կատարված կամ կատարվելիք ծախսերը:

2.1.2 Մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը ստորագրել սույն պայմանագրի 5.1 կետում նշված հաշվետվությունը՝ Սուբսիդիա ստացողի կողմից սույն պայմանագրով սահմանված բոլոր պարտավորությունները պատշաճ ձևով ու կարգով կատարելու դեպքում:

2.1.3 Իր և Սուբսիդիա ստացողի կանոնադրություններով սահմանված կարգով, ձևով ու չափերով Սուբսիդիա ստացողին ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն:

2.2 Սուբսիդիա հատկացնողը իրավունք ունի՝

2.2.1 Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Սուբսիդիա ստացողի կողմից սույն պայմանագրի կատարման ընթացքը և որակը, առանց միջամտելու վերջինիս կանոնադրական գործունեությանը (բացառությամբ օրենքով և Սուբսիդիա ստացողի կանոնադրությամբ սահմանված դեպքերի):

2.2.2 Սուբսիդիա ստացողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2.3 Իր իրավասությունների սահմաններում կասեցնել Սուբսիդիա ստացողի կողմից ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարվող աշխատանքները:

2.2.4 Սուբսիդիա ստացողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձևով կամ կարգով կատարված աշխատանքները:

2.2.5 Վերահսկել Սուբսիդիա ստացողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.3 Սուբսիդիա ստացողը պարտավոր է՝

2.3.1 Ժամանակին, լրիվ ծավալով, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրով հաստատված ծառայությունների մատուցումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական ակտերով հաստատված ձևով ու կարգով կատարելով դրանց հաշվառումն ու գրանցումը:

2.3.2 Սույն պայմանագրով սահմանված աշխատանքներն իրականացնել Սուբսիդիա հատկացնողի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և նրա իրավասությանը վերապահված այլ ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան:

2.3.3 Սուբսիդիա հատկացնողին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին:

2.3.4 Ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները սույն պայմանագրի կատարման համար առաջացած բոլոր տեսակի խոչընդոտները անհապաղ վերացնելու համար:

2.3.5 Սուբսիդիա հատկացնողի պահանջով ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող բոլոր տեսակի փաստաթղթերը:

2.3.6 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրավական ակտերով նախատեսված ձևով ու կարգով մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը Սուբսիդիա հատկացնողին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հանձնման-ընդունման ակտ կատարված աշխատանքների վերաբերյալ:

2.3.7 Սուբսիդիա հատկացնողի հետ նախապես համաձայնեցնել նրա իրավասությանը վերապահված հարցերի լուծման տարբերակները:

2.3.8 Անվտանգ պահպանել գրադարանային հավաքածուի 547326 միավոր գրականությունը:

2.3.9 Գրադարանային հավաքածուի պահպանությունն ապահովելու նպատակով իրականացնել հետևյալ աշխատանքները՝ 20000 միավոր գրականության ախտահանում և մանրէազերծում, 600 միավոր գրքերի և ամսագրերի մասնակի վերանորոգում:

2.3.10 Գրադարանի հավաքածուի ամենամյա ստուգումների շրջանակներում ապահովել ընթերցասրահում տեղակայված 2030 միավոր գրականության և 68449 միավոր ատենախոսությունների սեղմագրերի առկայությունը:

2.3.11 Գրադարանի կանոնադրական խնդիրներին համապատասխան գրադարանային հավաքածուի համալրման շարունակական գործընթացն ապահովելու նպատակով իրականացնել նյութական կրիչների ձեռք բերում, ինչպես նաև Հայաստանում հրատարակվող 20 անուն թերթերի ու ամսագրերի և Ռուսաստանի Դաշնությունում հրատարակվող ոչ պակաս քան 34 անուն բժշկական պարբերականների բաժանորդագրություն և ոչ պակաս, քան 130 միավոր գրականության ձեռքբերում:

2.3.12 Ապահովել գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայությունների մատուցման գործընթացի անընդհատություն՝ կազմակերպելով ոչ պակաս, քան 6350 ընթերցողի սպասարկումը:

2.3.13 Ապահովել գրադարանային հավաքածուի ոչ պակաս, քան 250000 միավոր հայերեն, ռուսերեն, անգլերեն գրականության սպասարկումը:

2.3.14 «Ինտերնետ» համացանցի միջոցով ապահովել կենսաբժշկական էլեկտրոնային տեղեկատվության որոնումը և տրամադրումը ընթերցողներին, ոչ պակաս, քան 25000 միավոր:

2.3.15 Համակարգչային տեխնոլոգիաների միջոցով իրականացնել ոչ պակաս, քան 30000 միավոր գրականության մատենագիտական տվյալների մուտքագրումը ՀԳԲԳ-ի էլեկտրոնային գրացուցակում և «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանցում»:

2.3.16 Իրականացնել ամբողջական տեքստերի տեղադրումը էլեկտրոնային գրացուցակում /7 անուն հայրենական բժշկական ամսագրի ոչ պակաս, քան 400 հոդված/, ընթերցողներին ամբողջական տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

2.3.17 Սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարել Սուբսիդիա հատկացնողի կողմից սահմանված մեթոդական ցուցումներին համապատասխան:

2.4 Սուբսիդիա ստացողն իրավունք ունի՝

2.4.1 Սուբսիդիա հատկացնողից պահանջել ընդունել սույն պայմանագրի 2.3 կետում նշված և Կատարողի կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված աշխատանքները:

2.4.2 Սուբսիդիա հատկացնողից պահանջել վերացնել Կատարողի գործողություններից (անգործությունից) անկախ սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները:

2.4.3 Պահանջել վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.4.4 Սուբսիդիա հատկացնողի հետ համաձայնեցված կարգով սույն պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար ներգրավել օրենքով չարգելված արտաբյուջետային ֆինանսական աղբյուրներ:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրի 1-ին կետում նշված աշխատանքների կատարման ընդհանուր արժեքը սահմանված է 63.331.200,0 (վաթսուներեք միլիոն երեք հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր) դրամ, որը վճարվում է համաձայն հավելվածի վճարման ժամանակացույցի: Մեկ միավոր գրադարանային առարկայի, գրադարանի պահպանման նվազագույն շահավետ գինը որոշվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի 2004 թվականի նոյեմբերի 24-ի №446-Ն հրամանով հաստատված կարգով, այն կազմում է դրամ: Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ իրավական ակտերով սահմանված հիմքերով ու կարգով:

3.2 Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը Սուբսիդիա հատկացնողն պետք է Սուբսիդիա ստացողին վճարի սույն պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցումներ կատարելու եղանակով:

3.3 Սուբսիդիա ստացողի կողմից աշխատանքների կատարման, սույն պայմանագրով, սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտվելու դեպքում Սուբսիդիա հատկացնողն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը:

3.4 Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարն իր մեջ է ներառում սույն պայմանագրի կատարման հետևանքով Սուբսիդիա ստացողի կողմից վճարման ենթակա բոլոր տեսակի հարկերի, տուրքերի ու պարտադիր վճարների գումարները, որոնք Սուբսիդիա ստացողը, հանդիսանալով հարկային գործակալ, պարտավոր է ինքնուրույն հաշվարկել ու վճարել Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման համայնքների բյուջեներ վերը նշված վճարները:

3.5 Սույն պայմանագրի Հավելվածով սահմանված վճարումների ժամկետները Սուբսիդիա հատկացնողի կողմից իր մեղքով ուշացվելու դեպքում նա Սուբսիդիա ստացողին է վճարելու նաև տուգանք՝ չվճարված գումարի 0,05 (հինգ հարյուրերորդական) %-ի չափով, վճարման ուշացման յուրաքանչյուր բանկային օրվա համար:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ստորագրության պահից և գործում է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 25-ը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սուբսիդիա հատկացնողի կողմից աշխատանքները ընդունվելու դեպքում այդ մասին կազմվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 18.05.10թ. №346-Ն հրամանով հաստատված ձևով եռամսյակային ու տարեկան հանձնման-ընդունման ակտ:

5.2 Սույն պայմանագրով սահմանված ժամկետները Սուբսիդիա ստացողի կողմից չպահպանվելու դեպքում նա Սուբսիդիա հատկացնողին է վճարելու տուգանք՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0,05 (հինգ հարյուրերորդական) %-ի չափով, ուշացման յուրաքանչյուր օրացուցային օրվա համար:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված /չստացված/ եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3 Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ

ստանալ սույն պայմանագրի 7.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.2 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի, սույն պայմանագրի հաճախակի (շարունակաբար) կամ կոպիտ (էական) եզակի խախտման դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

7.3 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի երկկողմ գրավոր համաձայնություն կազմելու միջոցով:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6. Սույն պայմանագիրը կնքելիս կողմերը հաստատում են, որ դրանով իրենց շահերը և օրինական իրավունքները ոչ մի կերպ չեն խախտվում կամ սահմանափակվում:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն պայմանագիրը կազմված է էջից (ներառյալ հավելվածները), կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Սուբսիդիա հատկացնող՝	**Սուբսիդիա ստացող՝**
ՀՀ առողջապահության նախարարություն,	«Հանրապետական գիտաբժշկական
ք. Երևան, Կառավարական շենք 3,	գրադարան» ՊՈԱԿ,
ՀՀ ֆինանսների նախարարության	ք. Երևան, Ռուբինյանց 29/3
աշխատակազմի գործառնական վարչություն	Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ Զեյթուն մ/ճ
Հ/Հ 900011105278	Հ/Հ 220305140059-000
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 02510167
ՀՀ առողջապահության նախարարության	Տնօրեն՝
աշխատակազմի ղեկավար՝	
---------- Արմեն Կարապետյան	---------- Աննա Շիրինյան
ստորագրություն Կ.Տ.	ստորագրություն Կ.Տ.

Հավելված
« » հունվարի 2016թ. N1 պայմանագրի

Վճարման ժամանակացույց

հազ. դրամ

N	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2016թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝												Ընդամենը տարեկան
	Անվանումը	հունվ.	փետրվ.	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստ	սեպտ.	հոկտեմբ.	նոյեմբ.	դեկտեմբ.	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ծրագիրը Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին								բաժին 08 խումբ 02 դաս 01 ծրագիր 01						ՀՀ 900011105278
Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին			7 379,9	3 689,9	5 245,0	5 245,0	5 245,2	5 245,1	5 245,1	5 245,1	6 930,3	6 930,3	6 930,3	63 331,2

Սուբսիդիա հատկացնող՝

ՀՀ առողջապահության նախարարություն,

ք. Երևան, Կառավարական շենք 3,

ՀՀ ֆինանսների նախարարության

աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011105278

ՀՎՀՀ 02507171

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝
Արմեն Կարապետյան

ստորագրություն Կ.Տ.

Սուբսիդիա ստացող՝

«Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ,

ք. Երևան, Ռուբինյանց 29/3

Ակբա-Կրեդիտ Ագրիկոլբանկ ՓԲԸ Հեյթուն մ/ճ

ՀՀ 220305140059-000

ՀՎՀՀ 02510167

Տնօրեն՝ Աննա Շիրինյան

ստորագրություն Կ.Տ.